

ՀԱՆԴԵՍ ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

ՀԻՒԱՆԴ ՏՂԱՅ

Խըղճալի է բընակարան աղքատին,
թայ պատին տակ կրոթընած է անկողին.
Կապերագ վըրան, հիւանդ տըղայն մէջ պառկած.
Բըժիշկը.քով, դէպ յանկողին մայրն ծըռած:
— « Հոգիդ սիրես, օգնէ տըղիս », կ'ասէ մայր,
Աչքերն արցունք, բարախս սիրան անդադար:
Եւ վախնալով նայուածք տընկած առ բըժիշկ,
կ'ուզէ կարդալ նորա սըրտին խոր գաղտնիք:
— ի՞նչ թող ասէ. — Եթէ լինէր տունն կոկիկ
Օդը մաքուր, սընընդարար կերակրիկ,
կարելի էր. — այլ կախուած է մօր վըրան
կարօտութիւնն, ինչպէս սուսեր գամնկլեան: —
Դեռ գիտութիւնըն չէ գըտած դեղ գարման
կարօտութեան դէմկըռուելու. այլ սակայն
կան միջոցներ երկարելու ցաւք, տանջանք
ի' ուշացընել հանգիստ մահուն ժամանակ:
Գըրեց բըժիշկ շատ գեղերով խաւան տոմսակ
Տըխուր յօնկերն պըռաստելով, — « Մի վախնաք,
նա մօրն ասաց, չէ, չի մեռնիր ձեր զաւակ »:
Այդ աւետիս էր մօր սըրտին երկնառաք:
Ա՛հ, չի մեռնիր, կապոյս աչքերըն նաշխուն
Պիտի ժըպտին դարձեալ քաղցրիկ սիրասուն.
Թոթովախսոս, գըգուանք նորա մանկական
Մայրենի սիրան դարձեալ ճըխալ պիտի տան:
Պիո՛ երազէ մայրըն յուսով, թէ ահա
Սիրուն տըղայն առողջ կայտառ կը մեծնայ,
Ցուրտ տանը մէջ, առանց լուսի, նեղ ու ցած,
Եւ հարկաւոր ամեն բանէ զըրկուած:
Այլ ինեղծ տըղայն հաշի մաշի օր օրանց.
Ինչպէս որ բայսն ուժգին հովին կէս կոտրած
Կը թառամի: թէպէտ երբեմըն կ'ըլլայ
Որ՝ զով ցողէն նոր ուժ առած կ'երեայ:

Ա. ՄԻԽԱՅԼՈՎ